ԿԱՐԾԻՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Նարեկ Վահագնի Հարությունյանի «Քրեական պատասխանատվությունը անօրինական միգրացիայի կազմակերպման համար. տեսական և գործնական հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Անօրինական միգրացիայի դեմ պայքարի խնդիրն ավելի ու ավելի հաճախ է դառնում միջպետական համաձայնագրերի առարկա՝ հաշվի առնելով դրա հետևանքով տարբեր պետությունների ինքնիշխանությանը, արտաքին և ներքին անվտանգությանը սպառնացող մարտահրավերների շարունակական աճի միտումները: Սակայն դոկտրինալ մակարդակում հնչում են նաև այլ կարծիքներ՝ մարդու ազատ տեղաշարժման իրավունքի իրացման անհրաժեշտության կապակցությամբ:

Մի շարք անդրազգային կազմակերպությունների (օրինակ՝ Շանհայի համագործակցության կազմակերպության) կողմից ընդունված փաստաթղթերի համաձայն՝ անօրինական միգրացիան ճանաչվում է միջազգային ահաբեկչության նյութական բազա, ինչը պայմանավորում է դրա դեմ համակարգային պայքարի միջոցառումներ ձեռնարկելու հրատապ անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետության համար անօրինական միգրացիայի խնդիրը արդի աշխարհաքաղաքական համատեքստում՝ ահագնանում է: Դա հիմնականում պայմանավորված է մեր աշխարհագրական դիրքով, կենսական գրեթե բոլոր ոլորտներում օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների հետ ակտիվ համագործակցությամբ, միջպետական նշանակության տրանսպորտային ուղիների առկայությամբ և այլն:

Անօրինական միգրացիային հակազդելու խնդիրը սերտորեն կապված է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հետ, քանի որ խնդրո առարկան հանդիսանում է հանցավոր կազմակերպությունների գործունեության առանցքային ուղղություններից մեկը, իսկ դրա ներկայացուցիչներին հաճախ հայտնի են ՀՀ տարածք ներթափանցելու գաղտնի ուղիները, վերջիններս հաճախ սերտ կապեր են հաստատում տարբեր պետական մարմինների ներկայացուցիչների հետ՝ դյուրինացնելով ապօրինի միգրացիայի իրականացման եղանակները, մեծացնելով դրա ծավալները:

Ժամանակակից գլոբալացման դարաշրջանում միգրացիոն գործընթացները վերածվել են համաշխարհային քաղաքականության և տնտեսության առանցքային գործոններից մեկի: Միաժամանակ, անօրինական միգրացիան, որպես այդ

գործընթացի ստվերային կողմ, վերածվել է լուրջ մարտահրավերի պետությունների ազգային անվտանգության, հասարակական կարգի և մարդու իրավունքների պաշտպանության համակարգերի համար: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ պայքարի քրեաիրավական մեխանիզմների ուսումնասիրությունը, ինչը պայմանավորում է ներկայացված ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը:

Հեղինակն արդարացիորեն նշում է, որ Հայաստանի Հանրապետության համար այս խնդիրը հատկապես սրվել է վերջին տարիներին, ինչը պայմանավորված է ինչպես տարածաշրջանային անկայունությամբ, այնպես էլ միգրացիոն հոսքերի աճող ինտենսիվությամբ: Այս առումով ատենախոսի կողմից ներկայացված վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ անօրինական միգրացիայի կազմակերպման դեպքերի կտրուկ աճի շարժընթացը պահանջում է քրեաիրավական կարգավորման կատարելագործում և իրավակիրառ պրակտիկայի միասնականացում:

Ատենախոսության առավելություններից է դրա բազմաշերտ վերլուծական բնույթը: Հեղինակը չի սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության ուսումնասիրությամբ, այլ ներկայացրել է համեմատական, կոմպարատիվիստիկ վերլուծություն ԵԱՏՄ անդամ երկրների (Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան), Եվրոպական միության պետությունների (Ֆրանսիա, Գերմանիա, Նիդերլանդներ, Իտալիա), ինչպես նաև անգլոսաքսոնական իրավական ընտանիքի երկրների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա) և Չինաստանի օրենսդրության հետ: Այս մոտեցումը թույլ է տվել հեղինակին ոչ միայն արձանագրել առկա իրավակարգավորման առանձնահատկությունները, այլև բացահայտել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության լրամշակման անհրաժեշտությունը՝ միջազգային լավագույն փորձի համատեքստում:

Հատկանշական է նաև հեղինակի կողմից միջազգային իրավական ակտերի խորը վերլուծությունը, ինչը հնարավորություն է տվել հստակեցնել անօրինական միգրացիայի կազմակերպման հանցակազմի սահմանման միջազգային չափորոշիչները և դրանց տեղայնացման կառուցակարգերը ՀՀ օրենսդրությամբ:

Ատենախոսության գիտական նորույթը կասկած չի հարուցում: Հեղինակը համակարգված և համալիր վերլուծության է ենթարկել անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրները: Աշխատանքի շրջանակներում օգտագործված է հարուստ տեսական գրականություն, հեղինակի կողմից անց է կացվել համեմատական հետազոտություն թեմային առնչվող բազմաթիվ խնդիրների կապակցությամբ, արվել են ինքնուրույն և հիմնավոր եզրահանգումներ, կատարվել են քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք

առաջարկություններ, որոնցից հատկանշական և հատկապես արժեքավոր են հետևյալները.

1. Առաջարկվել է՝ միավորել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 470-ի 1-ին և 2-րդ մասերը: Օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից այս փոփոխությունը թույլ կտա խուսափել անհարկի կրկնություններից և կնպաստի իրավակիրառ պրակտիկայի միասնականացմանը, դրա դյուրինացմանը:

2. Ատենախոսության կարևորագույն արժեքներից է հեղինակի կողմից «շահադիտական նպատակ» և «շահադիտական դրդում» հասկացությունների սահմանազատման վերաբերյալ առաջարկությունը: Քրեաիրավական գիտության մեջ այս երկու կատեգորիաների տարբերակումը մշտապես եղել է բանավիճային, սակայն հեղինակը ներկայացնում է համոզիչ փաստարկներ՝ հօգուտ «շահադիտական նպատակ» հասկացությունից հրաժարվելու և որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ նախատեսելու արարքի կատարումը «շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով»:

3. Նշանակալի է նաև հեղինակի առաջարկությունը՝ լրացնելու ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 470-ը նոր ծանրացնող հանգամանքով՝ «մի խումբ անձանց կողմից» (առանց նախնական համաձայնության) կատարելը, ինչպես նաև հանցավոր կազմակերպության կողմից կատարելու համար առանձին որակյալ տեսակի նախատեսումը: Այս տարբերակված մոտեցումը համահունչ է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի միջազգային չափորոշիչներին և թույլ կտա ավելի արդյունավետ հակազդել անօրինական միգրացիայի առավել վտանգավոր կազմակերպված ձևերին:

4. Ատենախոսության շրջանակներում հանգամանորեն քննարկված է անօրինական միգրացիայի կազմակերպման սահմանազատումը հարակից հանցագործություններից: Ներկայացված սահմանազատման չափանիշները, ունեն կարևոր տեսական և գործնական նշանակություն և կարող են ծառայել որպես մեթոդական ուղեցույց իրավակիրառ մարմինների համար:

Ատենախոսության կառուցվածքը տրամաբանական է և համապատասխանում է հետազոտության նպատակին ու խնդիրներին: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են յոթ ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործված գրականության ու նորմատիվ իրավական ակտերի ցանկից: Յուրաքանչյուր գլուխ ավարտվում է հեղինակի կողմից ձևակերպված հիմնավոր եզրահանգումներով:

Ներկայացված աշխատանքը բավարարում է ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին. այն ինքնուրույն հետազոտություն է, պարունակում է գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն ունեցող դրույթներ: Հեղինակը տիրապետում է գիտական վերլուծության մեթոդաբանությանը,

ցուցաբերել է բարձր տեսական պատրաստվածություն և կատարել է նորմատիվ իրավական ակտերի ու գրականության խորը ուսումնասիրություն:

Ատենախոսության վերաբերյալ ունենք նաև որոշ նկատառումներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

1. Հեղինակն իրավացիորեն մատնանշում է անօրինական միգրացիայի կազմակերպման շարժընթացի աճի միտումները, սակայն աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները վերլուծելիս ցանկալի կլիներ նաև անդրադառնալ հանցագործությունների լատենտայնության հիմնախնդրին: Հայտնի է, որ անօրինական միգրացիայի կազմակերպման դեպքերն ունեն չափազանց բարձր լատենտայնություն, և պաշտոնական վիճակագրությունն ամենևին չի արտացոլում այս երևույթի իրական ծավալները և պատկերը: Այս համատեքստում՝ հեղինակի կողմից անօրինական միգրացիայի կազմակերպման լատենտային իրավիճակների քննարկումը, դրա դեմ պայքարի քրեաիրավական գործիքակազմի ներդրման անհրաժեշտության մասին հիշատակումն, անշուշտ, աշխատանքը կդարձներ առավել համապարփակ:

2. Արտասահմանյան երկրների օրենսդրության համեմատական վերլուծությունը առավել հարուստ և ներկայացուցչական կլիներ, եթե քննարկվեին հատկապես մեր հարևան երկրներում անօրինական միգրացիայի տարածվածությունը, նշված հանցատեսակի դեմ պայքարի մեխանիզմները և հետագա հնարավոր համագործակցության ուղիները: Այս դիտանկյունից, հեղինակը սահմանափակվել է միայն Իրանի Իսլամական Հանրապետության օրենսդրության ուսումնասիրությամբ, հակիրճ արձանագրելով, որ Իրանում միջազգային լուրջ խնդիր հանդիսացող վերոհիշյալ արարքը չի դիտարկվում որպես հանրորեն վտանգավոր երևույթ՝ հանցագործություն:

3. Հաջորդ խնդրահարույց հանգամանքը կապված է իրավակիրառ և դատական պրակտիկայի ուսումնասիրության բացակայության հետ: Չնայած աշխատանքի վերտառությունը վկայում է, որ հեղինակը պետք է անդրադարձ կատարեր նաև գործնական հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց լուծման ուղիների մշակմանը, սակայն առանց իրավակիրառ և դատական պրակտիկայի, առանձին դատական գործերի ուսումնասիրության նշված խնդրի լուծումը լիարժեք համարվել չի կարող: Համոզված ենք, որ աշխատանքն էապես կշահեր, եթե դրանում հանգամանալից քննարկվեին դատաիրավական պրակտիկայի նյութերը, վեր հանվեին իրավակիրառ գործունեության ընթացքում առկա բացթողումները, արարքի որակման հիմնախնդիրները և ներկայացվեին դրանց արդյունավետ լուծմանը միտված առարկայական առաջարկություններ:

Հարկ է նկատել, որ նշված թերությունները մասնավոր բնույթ են կրում և չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր գիտական և գործնական դրական արժեքը, իսկ դրանց մատնանշումը պայմանավորված է աշխատանքն ավելի

ամբողջական տեսնելու նկատառումներով: Վերոշարադրյալի հիման վրա կարող ենք եզրահանգել, որ Նարեկ Վահագնի Հարությունյանի ատենախոսական հետազոտությունը արդիական, գիտականորեն հիմնավորված, տեսական և գործնական մեծ կարևորություն ունեցող ինքնուրույն աշխատանք է: Այն համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ տպագրված հոդվածները՝ դրա հիմնական դրույթները:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.դ. Տիգրան Սիմոնյան

Ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ՝ Ա.Պետրոսյան

15.05.2026թ.